

«ԱՆԱՀԻՏ»Ի ԲԱԺԱՌԱՐԴՆԵՐՈՒՆ

Անահիտի 1948ի երկրորդ թիւը և 1949ի առաջին թիւը այսօր միասին հրապարակ կը հանեմ: Երեւման բաւական երկար ընդհատումին, զոր այս թերթի ոչնեցաւ, սրատճառները մէկէ աւելի են: Մեր քնթերցողներէն շատեր կը գանդատէին ատենէ մը ի վեր այս հանգէսին ամէն մէկ թիւին մէջ Անահիտի հիմնադրին Քրոնիկ չգտնելուն համար: Այս թերթին իւրաքանչիւր թիւին մէջ Քրոնիկ մը դնելու և այս ձեւով օրուան կարեւորագոյն հարցերուն վրայ իմ տեսութիւննեներս բանաձեւելու փափաքը ևս ինքս ալ ունիմ, բայց բազմաձեւ ու մշտատեւ հանրային գործունէութիւնը զոր հայրենակիցներուս վստահութիւնը ինծի պարտադրածէ, թոյլ չէ տուած որ թերթիս ամէն մէկ թիւին մէջ այդ փափաքս գոհացնեմ: ԺԴ. տարուան երկրորդ թիւը տպուած էր քանի մը ամիս առաջ, բայց հրապարակ չհաջեցի, որովհետեւ Քրոնիկը կը պակաէր անոր ոչչ: Քրոնիկը՝ դոր շարադրեցի ներկայ թիւին համար այնքան ընդպարձակ եղաւ որ ստիպուեցայ անոր մէկ մասը միայն հրատարակել այս թիւին մէջ և մնացեալ մասը յետաձգել յաջորդ թիւին, որ կը յուսած թէ պիտի կարենայ լոյս տեսնել յառաջիկայ նոյեմբերին:

Անահիտի թիւերուն երեւման յապաղումին մէկ ուրիշ պատճառն աէ, — ինչո՞ւ ծածկել, — նիւթական գժուարութիւններն են: Բազմաթիւ են այն բաժանորդները որոնք քանի մը տարիէ ի վեր Անահիտն ստունալով հանդերձ, չեն վճարած իրենց բաժնեգինները, մինչ թուղթ, տպադրութիւն և առաքում մեծապէս սղած են այս վերջին տարիներուն:

Կը խնդրեմ Անահիտի բաժանորդներէն որ հաճին իրենց անվճար մնացած բաժնեգինները ինչքան կարելի է շուտ ինծի հասցնել՝ ուղղակի կամ այս թերթի գործակալներուն միջոցով:

Անահիտի բաժանորդներուն ստուար գոյն մասը կը գտնուի Ֆրանսայի և Միացեալ Նահանգաց մէջ: Ֆրանսայի համար ունիմ որոշ դիւրութիւններ գանձման. Ամերիկայի բաժանորդներէն կը խնդրեմ որ փուեան իրենց պարտական եղած բաժնեգինները յանձնել այս թերթի գործակալներուն և կամ զանոնք զրկեն կամ յանձնեն Հայ. Բարեգործ. Բնող. Միութեան կեդր. Դրասենեակի վարիչ-տնօրէն Պ. Գրիգոր Կիրակոսեանին որ Անահիտին համար իրեն յանձնուած գումարները ամենայն արագութեամբ ինծի կը հասցնէ:

Ամոնք որ չեն ուզեր բաժանորդ մնալ, կը խնդրեմ որ հաճին այս երկու թիւերը ինծի ևս դարձնել:

Փարիզ, 1 Յունիս 1949

Ա. Զ.